

## 1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կազմակերպության անվանումը՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»  
Իրավական կարգավիճակը՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն  
Կապի միջոցները՝ Հասցե՝ Նոր Նորք 3-րդ միկրոշրջան, Բաղյան 2  
Հեռ.՝ (010) 67 10 51  
Ֆաքս՝ (060) 51 10 52  
Էլ.փոստ՝ [info@mycareer.am](mailto:info@mycareer.am)  
Վեբկայք՝ [www.mycareer.am](http://www.mycareer.am)  
Տնօրեն՝ Հայկունի Գևորգյան

## 2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առաքելությունը՝ մասնագիտության ընտրության հարցում դպրոցականներին ուղղորդել դեպի աշխատաշուկա՝ բացահայտելով նաև նրանց անհատական առանձնահատկություններն ու նախասիրությունները, ինքնագնահատման և մոտիվացիայի մակարդակն ու հնարավորությունները և աջակցել աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացմանն ու առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելուն:  
Գործունեության սահմանները՝ ք.Երևան և հանրապետության մարզեր  
Շահառուները՝ դպրոցահասակներ, երիտասարդներ, ծնողներ, մանկավարժներ, գործատուներ  
Տեսլականը՝ Տյանսու մասնագիտական կողմնորոշման (կարիերայի ուղղորդման) միասնական համակարգի ստեղծում հանրապետությունում  
Նոր զարգացումների հիմքը՝

1. Հայաստանի Հանրապետության մասնագիտական կողմնորոշման զարգացման հայեցակարգը և իրականացման 2012-2015թթ. միջոցառումների ծրագիրը (ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 2012 թվականի հոկտեմբերի 4-ի նիստի N40 արձանագրային որոշմամբ)
2. «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ը «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» անվանակոչելու և նոր նպատակներ սահմանելու մասին ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1549-Ն որոշում, որով կենտրոնին է վերապահված **մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովումը, կադրերի վերապատրաստումը և որակավորման բարձրացումը:**

*Լերկայումս ընթացքի մեջ է Կենտրոնի նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը և վերակազմավորումը*

### Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2011-2012թթ. «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՄԿՈԼ հաստատությունների միջև համատեղ իրականացրած միջոցառումների մասին

ՄԿՈԼ հաստատությունների հետ աշխատանքները տարվել են երեք հիմնական ուղղությամբ

1. աջակցել ՄԿՈԻ հաստատությունների ղեկավար կազմի (տնօրենների) մասնագիտական կողմնորոշման մասին իրազեկվածության բարձրացմանն ու կարիքի բացահայտմանը
2. նպաստել հանրակրթական հաստատությունների շրջանավարտների մասնագիտության գիտակցված ընտրությանը,
3. աջակցելու ՄԿՈԼ հաստատությունների ուսանողների աշխատաշուկա ինտեգրմանն ուղղված հմտությունների և կարողությունների զարգացմանը:

Նախանշված ուղղություններով իրականացվել են հետևյալ հիմնական միջոցառումները.

- ✓ Թվով 20 ՄԿՈԼ հաստատությունների տնօրենների և պատասխանատուների մասնակցությամբ երկօրյա քննարկումների անցկացում՝ ուղղված մասնագիտական կողմնորոշման գործընթացի մասին նրանց իմացության և կարիքի բացահայտմանը, վերապատրաստում միջազգային փորձագետների և կենտրոնի մասնագետների կողմից, համատեղ ծրագրի նախագծում, ոլորտի աշխատող մասնագետների համար «Կարիերան ավելին է, քան գուտ աշխատանք» խորագրով ձեռնարկի մշակում (2010-2012թթ. - Բրիտանական խորհրդի աջակցությամբ)
- ✓ Երևանի ՄԿՈԼ հաստատություններում ճանաչողական միջոցառումների կազմակերպում հիմնական դպրոցների 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտների համար, ծանոթացում հաստատություններում ուսուցանվող կրթական ծրագրերին, մասնագիտությունների, զբաղմունքների աշխարհին, ընդունելության պայմաններին՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական ներկայացումների միջոցով:
- ✓ Երևանի և մարզերի ՄԿՈԼ հաստատությունների ավարտական կուրսի ուսանողների համար «Մասնագիտական կրթությունից-աշխատաշուկա» խորագրով ոչ ֆորմալ ուսուցումների կազմակերպում և անցկացում՝ ուղղված նրանց մասնագիտական և աշխատանքային գիտելիքների և կարողունակությունների, առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելու հմտությունների, աշխատանք փնտրելու կարողությունների զարգացմանն ու աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը:
- ✓ Կարիերայի տոնավաճառների կազմակերպում.
  - 2011թ. մայիսին «Կրթություն, աշխատանք, տնտեսական աճ» խորագրով լայնամասշտաբ միջացառում՝ 100-ից մասնագիտական ուս.հաստատությունների, գործատուների, շահագրգիռ կազմակերպությունների ներկայացմամբ, որին մասնակցեց ավելի քան 3500 երիտասարդ,
  - «Կողմնորոշում, կրթություն, ապագա աշխատանք» խորագրով կարիերայի տոնավաճառ միայն ՄԿՈԼ հաստատությունների ներկայացմամբ (թվով 10), որի ընթացքում անցկացվեցին վարպետաց դասեր շուկայում առավել պահանջարկված մի քանի մասնագիտությունների գծով, ներկայացվեցին ՄԿՈԼ հաստատություններում մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու հնարավորությունները, մասնագիտություններն ու որակավորումները: Տոնավաճառին մասնակցեց շուրջ 200 աշակերտ՝ Երևանի թվով 5 հիմնական և ավագ դպրոցներից:

**2013թ. հունվար ամսին իրականացված հարցաթերթային ուսումնասիրության նախնական արդյունքները.**

ՄԿՈԼ հաստատություններում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ միայն 2-3 հաստատություն ունի կարիերայի կենտրոն, այլն էլ ոչ լիարժեք ձևավորված: Սակայն ինչպես նշել էին գրեթե բոլոր հաստատությունների ներկայացուցիչները, «...կարևորում են այսօր ունենալ կարիերայի կենտրոն, որը կաջակցի ուսանողներին տարածաշրջանի աշխատաշուկային անհրաժեշտ մասնագիտություն ընտրելու և հետագայում աշխատանքի տեղավորվելու համար, ինչպես նաև դրանք գործող ուսումնական ծրագրերում կապահովեն ոչ միայն համապատասխան որակ, այլ նաև համակարգված փոփոխություններ կատարել ուսումնառության գործընթացում»:

### Կենտրոնի 2013թ. հիմնական միջոցառումների ծրագրից

2.	<b>Մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրում</b>			
2.1	«ՄԿՈԼ հաստատություններում կարիերայի կենտրոնների ստեղծման և զարգացման ուղեցույց» ձեռնարկի մշակում (այդ թվում՝ կարիերայի կենտրոնի կանոնադրության կամ կանոնակարգի, պատասխանատուների պաշտոնի անձնագրի և ծառայությունների նկարագրության օրինակելի ձևերի մշակում)	ՄԿՈԼ հաստատություններում կարիերայի կենտրոնների ստեղծում և զարգացում (ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների հայեցկարգի գործողությունների ծրագրի ժամանակացույց (կետ 2.2)	տարվա ընթացքում	ՄԿՄԿ ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ԿԳՆ ԵԿՀ
2.2	ՄԿՈԼ հաստատությունների կարիերայի պատասխանատուների վերապատրաստում	Թվով 12 տարածաշրջանային քոլեջներում վերապատրաստված համապատասխան մասնագետներ	1-ին կիսամյակ	ՄԿՄԿ ՄԿՈՒԶԱԿ
2.3	«Կարիերայի կառավարում» ոչ ֆորմալ ուսուցման ծրագրի մշակում (շուրջ 10 ենթաթեմա. Ինքնագնահատում, Կարիերայի հնարավորությունների ուսումնասիրություն, Կրթություն և ուսուցում, Աշխատանքի որոնում, Աշխատանքային իրավահարաբերություններ, Ձեռնարկատիրական հմտությունների ձևավորում և այլն)	Ուսանողների և շրջանավարտների աշխատաշուկային միտված հմտությունների զարգացում	4-րդ եռամսյակ	ՄԿՄԿ ՀՀ ԱՍՀՆ ՀՀ ԿԳՆ

### **Բացի ուսումնամեթոդական աշխատանքներից, տարվա ընթացքում նախատեսվում են.**

1. Կարիերայի կենտրոնների ստեղծման և ծառայությունների մասին իրազեկման սեմինարներ 3 մարզերում և Երևանում՝ ընդգրկելով բոլոր ՄԿՈԼ հաստատությունների պատասխանատուներին, 2013թ. մայիս (ԵԿՀ աջակցությամբ)
2. Կարիերայի տոնավաճառ Երևանում (2013թ. հունիս) և Թալինում (հավանաբար՝ Թալինի տարածաշրջանային քոլեջում, մայիս, 2013թ.)

3. Թվով 5 մասնագիտություններ ներկայացնող ֆիլմաշար, որից 3-ը՝ ՄԿՈՒ որակավորման մասնագիտությունների մասին (Կենտրոնի ֆիլմադարանում առկա E 10 մասնագիտության մասին ֆիլմաշար)
4. Դպրոցականների ուսումնաճանաչողական այցերի կազմակերպում ՄԿՈՒ հաստատություններ

**Հայկուհի Գևորգյան  
Կենտրոնի տնօրեն**